ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2023թ. թիվ 439-Ա

ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 872-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի» 11.2.1 կետի՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2023 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ Լոռու մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել «ՀՀ Լոռու մարզի անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքների կազմակերպում և իրականացում» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ուսումնավարժություն):

2. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ս.Գաբրիելյանին:

3. Հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) ուսումնավարժության մասնակիցների և միջնորդական խմբի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2023 թվականի սեպտեմբերի 5-ը ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի մշակումը, հաստատումը և ուսումնավարժության մասնակիցներին տրամադրումը.

2) կազմակերպել ուսումնավարժության ղեկավարման շտաբի և մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատված օրացուցային պլանի.

3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2023 թվականի սեպտեմբերի 18-ին.

4) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել արտակարգ իրավիճակներում գործելու համապատասխան պլանները.

2) ապահովել սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատված օրացուցային պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը և ըստ սահմանված ժամկետների տեղեկացնել ուսումնավարժության ղեկավարման շտաբին.

3) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) ուսումնավարժության անցկացման ընթացքում պատրաստ լինել զեկուցելու կատարված միջոցառումների մասին:

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Ա.Գասպարյանին՝ ապահովել ուսումնավարժության անցկացման ընթացքի լուսաբանումը մարզային լրատվամիջոցներով:

7. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

28/08/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. օգոստոսի 28-ի
թիվ 439-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/Հ	***Ազգանուն, Անուն, Հայրանուն***	***Զբաղեցրած պաշտոնը***
Ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խումբ		
1.	Դալլաքյան Լևոն Վոլոդյայի	Լոռու մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ - խմբի ղեկավար
2.	Պողոսյան Արտակ Սամվելի	Լոռու մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան
3.	Եղիազարյան Վաչագան Բաղդասարի	Լոռու մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

28/08/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. օգոստոսի 28-ի
թիվ 439-Ա որոշման

ԿԱԶՄ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Հ/Հ	***Ուսումնավարժության մասնակիցները***	***Միջնորդներ***	
		պաշտոնը	***ազգանուն, անուն***
1.	ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի անդամներ	-	-
2.	ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչություն	-	-
3.	ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 3 բանակային կորպուս	ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ	Պողոսյան Արտակ
4.	ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչություն	ՄՓՎ ԲՊ ավագ հրահանգիչ	Սողոմոնյան Վահագն
5.	ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկապահակային ծառայություն	ՄՓՎ ԲՊ բաժնի պետ	Գրիգորյան Արմեն
6.	Մարզպետի աշխատակազմի վարչություններ	ՄՓՎ վարչության պետի տեղակալ	Դալլաքյան Լևոն
7.	Անտառային պետական կոմիտեի Լոռու մարզի անտառտնտեսություններ	ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ	Վարդանյան Պավլիկ
8.	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, Գուգարք և Փամբակ բնակավայրեր	ՄՓՎ ԲՊ բաժնի հրահանգիչ	Եղիազարյան Վաչագան
9.	«ՀՀ ՇՄ հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի «ՀՀ Լոռու մարզային ծառայություն»	ՄՓՎ ՃԿԿ հրահանգիչ	Մկրտչյան Սոնիկ
10.	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ	ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ	Խաչատրյան Սեյրան
11.	«ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղ		
12.	«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի Վանաձորի տեղամաս		
13.	«Հարավ-Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ «Վանաձոր» գծակայարանային միավորում	ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ	Ավետիսյան Կարեն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

28/08/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 3.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. օգոստոսի 28-ի
թիվ 439-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/հ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը*	*Պատասխանատու կատարողներ*	*Նշումներ*
Փաստաթղթերի մշակում				
1.	Ելակետային տվյալների որոշում՝ վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	մինչև 15.08.2023թ.	Ուսումնավարժության ղեկավար, ղեկա-վարման շտաբ	
2.	Մտահղացման մշակում	մինչև 22.08.2023թ.	Ղեկավարման շտաբ	
3.	ՇՈՒ անցկացման պլանի մշակում	մինչև 23.08.2023թ.	Ղեկավարման շտաբ	
4.	ՇՈՒ ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում	մինչև 23.08.2023թ.	Ղեկավարման շտաբ	
5.	ՇՈՒ փաստաթղթերի հաստատման ներկայացում	մինչև 24.08.2023թ.	Ղեկավարման շտաբի պետ	
Ղեկավար և միջնորդական կազմի նախապատրաստում				
6.	ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	մինչև 11.09.2023թ.	Ուսումնավարժության ղեկավար, ղեկա-վարման շտաբ	
7.	Միջնորդների հրահանգավորում	Մինչև 15.09.2023թ.	Ղեկավարման շտաբ	
Ուսուցանվողների նախապատրաստում				
8.	Ուսումնավարժության մասնակիցներին նախապատրաստման ու անցկացման պլանավորող փաստաթղթերի հետ ծանոթացում՝ իրենց առնչվող մասով	մինչև 17.09.2023թ.	Ղեկավարման շտաբ	
9.	ԱԻ բնագավառը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրում	մինչև 17.09.2023թ.	Ղեկավարման շտաբ, ստորաբաժանումների հրամանատարներ	
10.	Փոխհամագործակցության պլանների ճշգրտում	մինչև 17.09.2023թ	Ղեկավարման շտաբ, մարզի ուսումնավարժության մասնակիցներ	

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

28/08/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ